

1.2.4. Շինարարություն

Բնակարանային շինարարություն: 2005թ. հունվարին հանրապետությունում բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 4971 քառ.մ ընդհանուր մակերեսով 20 նոր բնակելի շենք կամ 2004թ. հունվարին գործարկված մակերեսի 116.4%-ը: Մասնավորապես. Մասիսի տարածաշրջան՝ 140 և 1, Նաիրիի՝ 300 և 2, Արթիկի՝ 286 և 1, ք.Վանաձորում՝ 745 և 2, ք.Երևանում՝ 3500քառ.մ և 14 բնակելի շենք:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը

	2004թ.			2005թ.		
	ընդհանուր մակերեսը, քառ. մետր	2003թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %	նախորդ ամսվա նկատմամբ, %	ընդհանուր մակերեսը, քառ. մետր	2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %	նախորդ ամսվա նկատմամբ, %
Հունվար	4270	179.9	7.1	4971	116.4	7.6

2005թ. հունվարին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի 100%-ն իրականացվել է բնակչության միջոցների հաշվին (2004թ.՝ 100%):

Իրականացված շինարարության ծավալը: 2004թ. հունվարին հանրապետությունում իրականացվել է 2920.5 մլն.դրամի շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 1185.4 մլն. դրամի, իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 2146.4 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 570.5 մլն. դրամ:

Շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների 2005թ. հունվարին

Ֆինանսավորման աղբյուրներ	Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	2004թ. նկատմամբ, % (համադրելի գներով)		Ընդհանուրի նկատմամբ, %	
			շինարարություն	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	շինարարություն	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը ՀՀ	2920.5	2146.4	105.2	100.2	100	100
այդ թվում ի հաշիվ՝						
պետական բյուջեի	74.5	58.7	17.4	14.1	2.5	2.7
համայնքների միջոցների	7.5	7.5	2.1անգամ	2.1անգամ	0.3	0.4
Համաշխարհային բանկի վարկի	549.1	321.9	130.7	81.6	18.8	15.0
նարդասիրական օգնության միջոցների	4.2	4.2	41անգամ	42անգամ	0.1	0.2
դրամից՝						
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	0.3	0.3	-	-	0.0	0.0
այլ նարդասիրական օգնության միջոցների	3.9	3.9	-	-	0.1	0.2
կազմակերպությունների միջոցների	1296.0	765.0	155.7	2.6անգամ	44.4	35.6
բնակչության միջոցների	989.2	989.1	93.4	98.9	33.9	46.1

Շինարարության ծավալների աճի տեմպերը

	2004թ.			2005թ.		
	Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	% (համադրելի գներով)		Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	% (համադրելի գներով)	
		2003թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	2782.1	91.0	8.9	2920.5	105.2	7.5

2005թ. հունվարին իրականացված 2920.5 մլն.դրամի շինարարությունը 2004թ. հունվարի համեմատությամբ աճել է 5.2%-ով, այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներինը՝ 0.2%-ով:

Շինարարության ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2005թ. հունվարին

	Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը ՀՀ	2920.5	2146.4	100	100
<i>այդ թվում՝</i>				
գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	538.6	175.7	18.4	8.2
հանքագործական արդյունաբերություն	1.3	1.3	0.0	0.1
մշակող արդյունաբերություն	327.5	88.5	11.2	4.1
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	54.4	43.6	1.9	2.0
առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	878.5	878.4	30.1	40.9
հյուրանոցներ և ռեստորաններ	30.5	30.5	1.0	1.4
տրանսպորտ և կապ	81.6	79.5	2.8	3.7
ֆինանսական գործունեություն	26.3	-	0.9	-
անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	501.3	478.9	17.2	22.3
պետական կառավարում	63.4	14.5	2.2	0.7
կրթություն	54.1	54.1	1.9	2.5
առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	1.0	1.0	0.0	0.1
կոմունալ, սոցիալական և առհասարակ ծառայությունների մատուցում	362.0	300.4	12.4	14.0

Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ: 2005թ. հունվարին ք. Երևանում Համաշխարհային բանկի վարկի հաշվին վերանորոգվել է 337 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց:

Շինարարությունն աղետի գոտում

Բնակարանային շինարարություն: 2005թ. հունվարին երկրաշարժից տուժած քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության միջոցների հաշվին շահագործման է

հանձնվել 1031 քառ.մ ընդհանուր մակերեսով 3 նոր բնակելի շենք կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 20.7%-ը:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերն աղետի գոտում

	2004թ.			2005թ.		
	ընդհանուր մակերեսը, քառ. մետր	2003թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %	նախորդ ամսվա նկատմամբ, %	ընդհանուր մակերեսը, քառ. մետր	2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %	նախորդ ամսվա նկատմամբ, %
Հունվար	132	37.3	9.1	1031	7.8անգամ	7.8

2005թ. հունվարին բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի 100 %-ը շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2004թ.՝ 100%):

Իրականացված շինարարության ծավալը: Հանրապետության աղետի գոտում 2005թ. հունվարին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 150.7 մլն.դրամի շինարարություն կամ հանրապետությունում շինարարության ընդհանուր ծավալի 5.2%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 16.9մլն. դրամ (1.4%):

ՀՀ աղետի գոտում շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների 2005թ. հունվարին

	Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	150.7	150.7	100	100
<i>այդ թվում ի հաշիվ.</i>				
պետական բյուջեի	3.0	3.0	2.0	2.0
համայնքների միջոցների	0.3	0.3	0.2	0.2
Համաշխարհային բանկի վարկի	15.5	15.5	10.3	10.3
մարդասիրական օգնության միջոցների	0.7	0.7	0.5	0.5
<i>դրանից.</i>				
այլ մարդասիրական օգնության միջոցների	0.7	0.7	0.5	0.5
բնակչության միջոցների	131.2	131.2	87.0	87.0